

## ՏԻԳՐԱՆ ՔՈՂԱՐՅԱՆ

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության քաժնի պետ,  
ԶՀԾ 1-ին դասի խորհրդական

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի  
դասախոս, քաղաքական գիտությունների դոկտոր,  
դոցենտ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՔՍՎԱՔԱԿԱՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՍԱՀՍԱՆՅԱՆ ՄԻ ԾԱՐՔ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

Հայաստանի Հանրապետությունն իր միջազգային համագործակցության քաղաքականության մեջ առանձնացնում է նաև արտասահմանյան մի շարք երկրների հետ իրականացվող ռազմաքաղաքական փոխգործակցությունը: Հայաստանը շահագրգռված է զարգացնելու բազմաբնույթ հարաբերություններով եվրոպական երկրների հետ՝ առաջնային համարելով քաղաքական, ներառյալ ռազմաքաղաքական, ոլորտում երկրների հետ՝ նշանակալի ձեռքբերումներից է նաև Հիտվայի, Չինաստանի, Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Սլովակիայի, Կանադայի և Բելոռուսի պաշտպանության գերատեսչությունների հետ: Նշանակալի ձեռքբերումներից է նաև Լիտվայի, Ռուսաստանի, Լատվիայի, Էստոնիայի, Ռումինիայի, Բուլղարիայի և Բելգիայի հետ երկկողմ ռազմական համագործակցության շրջանակների ընդլայնումը՝ դրանց հաղորդելով առավել քաղաքականություն:

**Հիմնարար քառեր -** անվտանգություն, փոխգործակցություն, պաշտպանական քարեփոխումներ, քաղաքական երկխոսություն, ռազմավարություն, տարածաշրջան, քաղաքականություն, երկրի պաշտպանություն, միջազգային խաղաղություն, խաղաղապահ առաքելություն:

Հայաստանի Հանրապետությունն իր միջազգային համագործակցության քաղաքականության մեջ առանձնացնում է նաև արտասահմանյան մի շարք երկրների հետ իրականացվող ռազմաքաղաքական փոխգործակցությունը: Ավելին, եվրոպական երկրների հետ երկկողմ հարաբերությունները Հայաստանի եվրոպական ներգրավման ընդհանուր գործնթացների մասն են կազմում: Հայաստանը շահագրգռված է զարգացնելու բազմաբնույթ հարաբերություններ եվրոպական երկրների հետ՝ առաջնային համարելով քաղաքական, ներառյալ ռազմաքաղաքական, ոլորտում երկկողմ կապերի ամրապնդումն ու ընդլայնումը:

Ուղղական համագործակցության որոշակի ծավալները գերազանցելու պարագայում համագործակցության ծրագրերի իրականացման արդյունավետությունը անմիջականորեն պայմանավորված է լինում համապատասխան պաշտոնատար անձանց հետ օպերատիվ եղանակով կապ հաստատելու և որոշակի միջոցառումներին նրանց անմիջականությունն ապահովելու հանգամանքով: Հենց այս պարագայում է, որ անհրաժեշտություն է առաջանում այն երկրներում, որոնց հետ Հայաստանի Հանրապետությունը իրականացնում է առավել ակտիվ ռազմական համագործակցություն, ունենալ համապատասխան ներկայացնություն-պաշտոնատար անձանց՝ ռազմական կցորդներ: Բացի այդ, ռազմական կցորդ ունենալու

հանգամանքը կարենոր քաղաքական գործոն է, քանի որ որևէ երկրում ռազմական կցորդ նշանակելու հանգամանքը, նույնիսկ մեծածավալ միջազգային ռազմական ծրագրերի բացակայության պարագայում, վկայում է այն մասին, որ Հայաստանը հատկապես նշանակալի կարևորություն է տալիս այդ երկրի հետ իր ռազմաքաղաքական համագործակցությանը:

Անցած տարիների ռազմաքաղաքական գարգացումները ցույց են տալիս, որ Հունաստանի և Հայաստանի ռազմավարական շահերը տարածաշրջանում հիմնականում համընկնում են. շահեր, որոնք հիմնված են տարածաշրջանային խնդիրների նկատմամբ ընդհանուր մոտեցումների, անվտանգության և ռազմաքաղաքական հավասարակշռության պահպանման անհրաժեշտության գիտակցման վրա: Արդյունքում՝ ամուր հիմք է ստեղծվում սերտ համագործակցության ել ավելի խորացնալ համար՝ երկու երկրները դարձնելով ռազմավարական գործընկերներ:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հունաստանի Հանրապետության ազգային պաշտպանության նախարարության (ԱՊՆ) միջև համագործակցությունը հիմնվում է 1996 թվականի «ՀՀ ՊՆ և Հունաստանի ԱՊՆ միջև ռազմական համագործակցության վերաբերյալ», 1998 թվականին ստորագրված «Հունաստանի Հանրապետության ԱՊՆ և Հայաս-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տանի Հանրապետության ՊՆ միջև Հունաստանի Հանրապետության ռազմական ուսումնական հաստատություններում Հայաստանի քաղաքացիների ուսուցման կարգի և պայմանների մասին» և 1999 թվականին ստորագրված «ՀՀ կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև սպառազինության և պաշտպանական տեխնոլոգիաների բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրերի վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հունաստանը հանդիսանում է ՆԱՍՕ-ի անդամ երկիր, նրա հետ համագործակցությունը կարևորվում է ինչպես երկկողմ ձևաչափով, այնպես էլ ՆԱՍՕ-ի շրջանակներում: Վերոնշյալ նկատառություններից ելենով՝ Հայաստանը և Հունաստանը ռազմաքաղաքական հարաբերությունները ծավալում են համագործակցության լայն շրջանակով՝ ընդորկելով մի շարք բնագավառներ: Հայ-հունական ռազմաքաղաքական համագործակցությունն իրականացվում է հետևյալ բնագավառներում. ռազմական ուսուցում, սպառազինություններ ու ռազմական արդյունաբերություն, վերիշիկացիա և հետախուզություն, ռազմական բժշկություն, զորավարժություններ և վարժանքներ, նյութական ու ֆինանսական աջակցություն մի շարք բնագավառներում:

1993 թվականից ՀՀ պաշտպանության նախարարության կուրսանտները հիմնարար ռազմական կրթություն են ստանում Հունաստանի ռազմաուսումնական հաստատություններում՝ Ցամաքային զորքերի ռազմական ակադեմիայում և Ենթապահների պատրաստման դպրոցում: Հունաստանի հետ ռազմական համագործակցության հարածուն ծավալների պայմաններում Հունաստանում կրթություն ստացած սպաները էապես նպաստել են հայ-հունական ռազմական համագործակցության ծրագրերի մշակման, միջոցառումների իրականացման, իսկ միջազգային խաղաղապահ առաքելությունների շրջանակներում՝ Հունաստանի ստորաբաժնումների հետ համագործակցության արդյունավետության բարձրացմանը:

Հունաստանի ազգային պաշտպանության նախարարությունը պարբերաբար նյութական և ֆինանսական աջակցություն է ցույց տվել ՀՀ զինվածք ուժերին նաև ՆԱՍՕ-ի գործառնության շրջանակներում: Մասնավորապես, հունական կողմը ֆինանսավորել է հայ-հունական ռազմական համագործակցության շրջանակներում անցկացվող որոշակի միջոցառումներ, Հայաստանի կողմից տեսչության անցկացումը Հունաստանում: Հունաստանի կողմից տրամադրվել է նյութական աջակցություն՝ ռազմաքաղաքական սարքավորումներով և դեղորայքով:

Հայ-հունական ռազմական համագործակցությունն իրականացվում է պլանային հիմքի վրա՝

տարեկան համագործակցության ծրագրերի ձևով, որոնք հաստատվում են երկու երկրների ԶՈՒ ԳԸ պետերի կողմից: Այդ համագործակցության ծրագրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ընթացել է շարունակական ընդլայնման ճանապարհով, և ներկայումս առկա են արդյունավետ համագործակցության հեռանկարային ուղղություններ, հատկապես՝ ռազմաարդյունաբերական համատեղ ծրագրերի մշակման ուղղությամբ: Ռազմական համագործակցության ընդլայնումն ու զարգացումը բարենպաստ նախադրյապներ են ստեղծում ռազմաքաղաքական երկխոսության և համագործակցության, իսկ հեռանկարում՝ ռազմավարական դաշնակցային հարաբերությունների հաստատման համար: Հայ-հունական ռազմական համագործակցությունը միտված է ստեղծելու նախապայմաններ որևէ երկրի կողմից տարածաշրջանում մենաշնորհ գերակայության հասնելու ձգուումները չեզոքացնելու համար, ինչպես նաև նպաստելու տարածաշրջանային կայունության, անվտանգության և ռազմաքաղաքական հավասարակշռության պահպանմանը: Հայ-հունական ռազմական և ռազմաքաղաքական համագործակցությունը որոշակի հակալիքու է ստեղծում Թուրքիայի՝ Հարավային Կովկասում ռազմական դաշինք ձևակորելու հեռագնա ծրագրերին: Հունաստանը թեև Թուրքիայի հետ միասին գտնվում է Հյուսիսատլանտյան դաշինքում, փակուղի մտած Կիպրոսի հիմնախնդիրը և հակասությունները Էգեյան ավազանում ստիպում են երկու պետություններին մշտապես գտնվել սպառազինությունների մրցավազքի մեջ:

Ռազմատեխնիկական, ռազմաուսումնական և ռազմատեխնիկատվական բնագավառներում Հունաստանի հետ համագործակցության հետագա ընդլայնումն ու զարգացումը հնարավորություն կընձեռի առավել արդյունավետորեն պաշտպանել երկու երկրների ընդհանուր ռազմավարական շահերը: Առանձնակի կարևորություն են ներկայացնում Հայաստանի և Հունաստանի ռազմաքաղաքական կապեր՝ տարածաշրջանային անվտանգության խնդիրների վերաբերյալ ընդհանուր մոտեցումների ձևակորման նպատակով:

Հայաստանի ռազմաքաղաքական գործակցությունը Զինաստանի հետ կարևոր նշանակություն ունի տարածաշրջանում կայունության և համապարփակ անվտանգության ստեղծման համար: Զինաստանը՝ որպես ՍԱԿ-ի անվտանգության խորհրդի մշտական անդամ և միջուկային տերություն, զգալի ազդեցություն կարող է ունենալ ցանկացած միջազգային խնդիրի կարգավորման հարցում: Զինաստանը, որը 21-րդ դարում իր տնտեսությամբ և ռազմական ներուժով հավակնում է գերազանցել մյուս գերտերություններին, ցանկացած պետու-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյան համար հեռանկարային դաշնակից է դիտվում: Հատկապես Հարավկովկասյան տարածաշրջանում, որտեղ Հայաստանը իրականացնում է ուազմաքաղաքական տարրեր բնեոների հավասարակշռման քաղաքականություն, Զինաստանի հետ ուազմաքաղաքական կապերի զարգացումը հեռանկարային կարևորագույն ուղղություն է: Հայ-չինական ուազմական համագործակցությունը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ Զինաստանը մեր տարածաշրջանում իրականացնում է շտարբերակված քաղաքականություն, և այս տեսանկյունից ՀՀ-ՉԺՀ ուազմական հարաբերությունների զարգացումը իմաստավորվում է նաև ՀՀ նկատմամբ անկողմնակալ դիրքորոշման ձևավորման առումով<sup>2</sup>:

ՀՀ և ՉԺՀ միջև ուազմական համագործակցությունը իմմնվում է 1997 թվականի մայիսի 28-ին երկու երկրների կառավարությունների միջև ստորագրված ուազմարդյունաբերական և ուազմատեխնիկական համագործակցության մասին Համաձայնագրի հիման վրա: Համաձայնագրով նախատեսվում է կողմների փոխահագործության դեպքում ուազմական տեխնիկայի և սպառազինության փոխմատակարարումների իրականացում, մատակարարվող ու արտոնագրերի հիման վրա արտադրվող սպառազինությունների վերանորոգում և տեխնիկական սպասարկում, գիտափորձարարական ու փորձակոնստրուկտորական համատեղ աշխատանքների իրականացում, փորձի, տեխնոլոգիաների և տեղեկատվության փոխանակում, ինչպես նաև համագործակցություն ուազմական արդյունաբերության կոնվերսիայի բնագավառում: Համաձայնագրով կողմները կարող են համագործակցություն իրականացնել ուազմամթերքի արտադրության, էլեկտրոնային տեխնիկայի, գինված ուժերի կառավարման ավտոմատացված համակարգերի և լազերային տեխնիկայի ոլորտներում<sup>3</sup>:

Այդ պայմանագրի ստորագրումից հետո հայշինական հարաբերություններում բավականին ակտիվություն նկատվեց, և ուազմական փոխարարերությունների շարունակական զարգացումը վերջին տարիներին նախադրյալներ է ստեղծում երկու երկրների փոխշփումները նոր հիմքերի վրա դնելու համար: Հայ-չինական հարաբերություններում առաջնայնություն է տրվում ուազմատեխնիկական բնագավառին: Այստեղ Հայաստանի համար հետաքրքրություն է ներկայացնում ուազմարդյունաբերական ոլորտում համագործակցության զարգացման հեռանկարը, որի ուղղությամբ իրականացվել են որոշակի աշխատանքներ:

Վերոնշյալ համաձայնագրի հիման վրա ՀՀ պաշտպանության նախարարությունը ՉԺՀ պաշտպանական արդյունաբերության «Նորինկո» ձեռնարկության հետ ստորագրել է մի քանի համա-

ձայնագրեր կոնկրետ համատեղ ծրագրերի վերաբերյալ: Մասնավորապես, ՀՀ ԶՈՒ-ն համագործակցության շրջանակներում 1998 թվականին Զինաստանից ձեռք է բերել WM-80 տեսակի հրթիռային համակարգեր և ականազերծման սարքավորումներ, որոնց տեխնիկական սպասարկումը իրականացվել է չին մասնագետների կողմից 1999-2000 թվականներին: Զինաստեսակը ԵՍԶՈՒ պայմանագրի պայմանների համաձայն 2000 թվականին ցուցադրվել է ԵՍԶՈՒ պայմանագրի մասնակից պետությունների դժուռդական խմբին: WM-80 տեսակի հրթիռային կայանքների առկայությունը ՀՀ զինված ուժերում որոշակի նախապայմաններ է ստեղծում սպառազինության մատակարարումների բնագավառում համագործակցության նոր հնարավորությունների բացահայտման և զարգացման համար: ՀՀ-ին չինական արտադրության սպառազինության մատակարարն ազրարքը և այդ առթիվ Աղրբեջանի կողմից բարձրացված աղմուկը վկայում են, որ ՀՀ-Զինաստան ուազմական համագործակցության ծրագրերը ոչ միայն ուազմատեխնիկական, այլև որոշակի ուազմաքաղաքական նշանակություն ունեն:

ՀՀ-ՉԺՀ ուազմական համագործակցության խթանման համար էական նշանակություն է ունեցել ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի՝ 1998 թվականին Զինաստան կատարած պաշտոնական այցելությունը, ինչի արդյունքում բննարկվել և որոշակիացվել են ՀՀ-ՉԺՀ ուազմական համագործակցության ծրագրերն ու ուղղությունները: ՀՀ և ՉԺՀ բարձրաստիճան գինվորական պատվիրակությունների փոխայցելությունների արդյունքում ձեռք բերված պայմանագրվածությունները մի շարք ոլորտներում համագործակցության հեռանկարներ են բացում: Անցկացված հանդիպումներն ու բննարկումները վկայեցին, որ Զինաստանը մեծ հետաքրքրություն է դրսևորում ՀՀ-ի հետ բարձր տեխնոլոգիաների և ավտոմատացված համակարգերի բնագավառում համագործակցության նկատմամբ: Արդեն իրականացվում են ուազմական նշանակության որոշակի համատեղ ծրագրեր: Փոխայցելությունների արդյունքում որպես համագործակցության հեռանկարային ուղղություններ են որակվել թիկունքի, ուազմաքաղաքական, ուազմաուսումնական բնագավառները:

Հայաստանի և Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարությունների միջև ուազմական և ուազմաքաղաքական շփումներն ու համագործակցություններ իմմնականում իրականացվում են բրիտանական կողմից առաջարկվող համագործակցության տարեկան պլանների հիման վրա: Բրիտանական կողմի համեմատարար սահմանափակ ուազմական քաղաքականությունը Հայաստանի և Աղրբեջանի նկատմամբ պատճառարան-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վում է ԼՂ հակամարտության հանգամանքով, քանզի երկրի արտաքին քաղաքական հրահանգները արգելում են ավելի ակտիվ ռազմական համագործակցությունը Հարավային Կովկասի հակամարտող երկրների հետ: Բրիտանական կողմը փորձում է խստ հավասարակշռություն պահպանել թե՛ Հայաստանի, թե՛ Աղբեջանի հետ ռազմական համագործակցության հարցում:

Հայաստանի ու Մեծ Բրիտանիայի միջև ռազմաքաղաքական շփումները անմիջականորեն չեն առնչվում զուտ ռազմական բնույթի համագործակցությանը և այդ առումով հայ-բրիտանական համագործակցությունը կարելի է բավականին արդյունավետ համարել: Առավել արդյունավետ կարելի է գնահատել համագործակցությունն անգլերենի ուսուցման ոլորտում: 1999 թվականից ի վեր ՀՀ ԶՈՒ ներկայացուցիչները պարբերաբար մասնակցում են Յորքում և Բեքոնսֆիլդում կազմակերպվող ռազմական անգլերենի դասընթացներին: 2000 թվականի նոյեմբերին Մեծ Բրիտանիայի աջակցությամբ ՀՀ ռազմական ինստիտուտում բացվեց անգլերենի ուսուցման կենտրոնը, որը հնարավորություն է ընձեռում հայ սպաներին՝ սովորելու անգլերեն լեզու, ինչն իր հերթին կարևորվում է միջազգային միջոցառումներին արդյունավետորեն մասնակցելու համար: Նշված կենտրոնը կազմակերպվում են դասընթացներ տարբեր մակարդակներով, ինչպես սկսնակների, այնպես էլ որոշակի գիտելիքներ ունեցողների համար: Լեզվի կենտրոնի հիմնադրումը հատկապես կարևորվում է այն հանգամանքով, որ անգլերենի ուսուցման կենտրոնում հնարավորություն են ստանում սովորելու նաև խաղաղապահ գումարտակում ընդգրկվելիք զինվորականները:

Վերջին տարիների ընթացքում նկատելի է Հայաստանի նկատմամբ Մեծ Բրիտանիայի ռազմական քաղաքականության որոշակի ակտիվացում: Մասնավորապես, ՀՀ ԶՈՒ ներկայացուցիչները պարբերաբար մասնակցում են Մեծ Բրիտանիայի կողմից Չեխիայում (Վշշկով) և Սլովակիայում կազմակերպվող խաղաղապահ գործողությունների հրահանգիչների, հրամանատարության ու դեկանակարման հրահանգիչների և կրտսեր շտաբային սպաների դաշտարագ-վարժանքներին: Բրիտանական կողմը շահագրգովածություն է ցուցաբերում նաև երկկողմ բարձրաստիճան փոխայցելությունների կազմակերպման և երկու երկրների միջև ռազմաքաղաքական խորհրդատվությունների անկացման հարցում: Բրիտանական ռազմագետների խմբերի այցելությունների հիմնական նպատակն է նախնական ուսումնասիրության անցկացումը և խորհրդատվությունների տրամադրումը պաշտպանական պլանավորման և բյուջետավորման, անձնակազմի կառավարման ու ԶՈՒ բարեփոխում-

ներին առնչվող այլ բնագավառներում:

Հայաստանի և Ֆրանսիայի միջև ռազմական հարաբերությունները զգալիորեն հետ են մնացել քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերություններից: ՀՀ պաշտպանության նախարարության և Ֆրանսիայի պաշտպանության նախարարության միջև հարաբերությունները կրում են սահմանափակ բնույթ: Չնայած Ֆրանսիայի նման պաստիվ ռազմական քաղաքականությանը տարածաշրջանում՝ պայմանավորված ԼՂ հակամարտությամբ, վերջին շրջանում երկկողմ ռազմական շփումները որոշակիորեն ակտիվացել են: Ներկայում Ֆրանսիայի հետ Հայաստանի կողմից իրականացվող երկկողմ միջազգային ռազմական համագործակցության իրավական հիմքն է 2010 թվականի փետրվարին ՀՀ ՊՆ և ՖՀ միջև Փարիզում ստորագրված «Պաշտպանության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը, որի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն իրականացնել այնպիսի կարևոր ուղղություններով, ինչպիսիք են ռազմական կրթությունն, խաղաղապահ առաքելության առնչությամբ փորձի փոխանակումը և այլն: Մասնավորապես, ուսումնառության նպատակով նախատեսվում է Ֆրանսիա ուղարկել ՀՀ ռազմատումնական հաստատությունների կուրսանացներին: Այստեղ հարկ է ընդգծել՝ շնայած այն հանգամանքին, որ հայ-ֆրանսիական ռազմական համագործակցության իրավական կայուն հիմքը կազմող վերոնշյալ պայմանագիրը ստորագրվել է 2010 թվականին, այնուամենայնիվ, ՀՀ և Ֆրանսիայի Հանրապետության միջև միջազգային ռազմական համագործակցությունը, մասնավորապես բազմակողմ ձևաչափով, ունի բավականին երկար պատմություն:

2011 թվականի հոկտեմբերի 6-ից 9-ը պետական այցով Հայաստանում էր գտնվում Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին: Թեև այդ այցը տարածաշրջանային էր, սակայն նա ամենից երկար մնաց Հայաստանում: Սա ինքնին արդեն տարածաշրջանին հասցեագրված ուղերձ էր, սակայն այն ուղղված էր նաև Ֆրանսիայում ապրող կես միլիոն հայ քեարկողներին: Այցն օգտակար էր նաև երկու երկրների միջև տնտեսական համագործակցության հեռանկարների քննարկման, ատոմակայանի կառուցման գործում Ֆրանսիայի մասնակցության և Ղարաբաղյան խնդրում հետագա առաջնքարագրության առումով:

ՀՀ ՊՆ և ԳԴՀ ՊՆ միջև ռազմական համագործակցությունն իրականացվում է պլանային հիմքի վրա: Մինչև 2003 թվականը հայ-գերմանական ռազմական կապերը սահմանափակվում էին ԳԴՀ շրջանակներում իրավական միջոցառումներով և սպառագինությունների վերահսկման ոլորտում շփումներով՝ ՀՀ ԶՈՒ ներկայացուցիչները

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ակտիվորեն մասնակցում են Զ. Մարշալի անվան անվտանգության հետազոտությունների գերմանական-ամերիկյան եվրոպական կենտրոնում կազմակերպվող դասընթացներին, սեմինարներին, համաժողովներին: ԳՀ ծրագրի շրջանակներում հայ սպաները մասնակցում են նաև ՆԱՏՕ-ի դպրոցում (Օբերամերօքառ, Գերմանիա) կազմակերպվող միջոցառումներին: 2004 թվականից սկսած՝ Գերմանիայի ռազմառումնական հաստատություններում ՀՀ պաշտպանության նախարարությանը սպայական բազմամյա ուսուցման տեղեր են հատկացվում:

Գերմանիայի հետ կրթության և ռազմական ոլորտներում համագործակցությունն իրականացվում է ի կատարումն երկու պետությունների միջև կմքած մի շարք պայմանագրերի: Դրանցից վերջիններն են ՀՀ ՊՆ և ԳԴՀ պաշտպանության նախարարության միջև 2008 թվականի մայիսի 5-ին ստորագրված «Ռազմական ուսուցման օգնության շրջանակներում ԳԴՀ զինված ուժերի կառույցներում ՀՀ ՊՆ և ծառայողների և ՊՆ աշխատակիցների ուսուցման մասին» համաձայնագիրը, 2010 թվականի հունվարի 11-ին Բոննում ստորագրված «Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցության ուժերի շրջանակում համագործակցության և օժանդակության մասին» փոխըքոնման հուչագիրը, 2011 թվականի մարտի 12-ին և 2011 թվականի մարտի 17-ին ստորագրված «Աֆղանստանի ազգային բանակի 209-րդ կորպուսի 2-րդ բրիգադի 6-րդ կանոնակի համար որպես մարտավարական օպերատիվ ուսուցման ու փոխգործողության խմբի բաղադրիչ ՀՀ ՊՆ անձնակազմի հատկացման հարցում համագործակցության և օժանդակության մասին» համաձայնությունը, ինչպես նաև 2011 թվականի ապրիլի 26-ին ու 2011 թվականի ապրիլի 29-ին ստորագրված «ՀՀ ՊՆ և ԳԴՀ ՊՆ միջև Մազարի Շարիֆի ուժերի պաշտպանության գումարտակի հենակետի հրամանաւատքին ՀՀ ՊՆ և ԳԴՀ ՊՆ միջև անհրաժեշտությունը համաձայների հատկացման շրջանակներում համագործակցության և օժանդակության մասին» համաձայնությունը: Բացի այդ, ՀՀ ՊՆ ստորաբաժանումը Աֆղանստանում խաղաղապահ առաքելության շրջանակներում ծառայությունը անցնում է գերմանական հրամանաւատքության ներքո, ինչն ամենօրյա օպերատիվ համագործակցության և արձագանքան անհրաժեշտություն է հիմնավորում:

Կանադայի հետ Հայաստանի Հանրապետությունը ռազմաքաղաքական հարաբերությունները է հաստատել երկկողմ և բազմակողմ ձևաչափերով: Համագործակցության ոլորտները ներառում են ռազմակրթական բարեփոխումները, ՀՀ ռազմառումնական հաստատությունների կուրսանումներին ուսումնառության նպատակով Կանա-

դայի ՌՈՒՀ-եր, մասնավորապես Տորոնտո քաղաքում գտնվող Կանադական ուժերի քոլեջի ուսումնական ծրագրերին մասնակցելու համար գործուղումները և այլն:

Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության միջև ռազմական համագործակցությունը կարևորվում է ՀՀ ՊՆ ռազմական ու ռազմատեխնիկական որոշակի կարիքների ապահովման, ինչպես նաև ՀԱՊԿ շրջանակներում ռազմական ինտենսիվացիոնից: Համագործակցությունն իրականացվում է ինչպես բազմակողմ, այնպես էլ երկու երկրների պաշտպանության նախարարությունների միջև պլանավորվող տարեկան ծրագրերի միջոցով:

Բելառուսի Հանրապետության հետ միջազգային ռազմական համագործակցության հիմքն են կազմում 1999 թվականի մայիսի 20-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև ռազմական ու ռազմատեխնիկական համագործակցության մասին», 2006 թվականի հունիսի 6-ին Սինսկում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև սպառազինության և ռազմական տեխնիկական փոխադարձ մատակարարությունների մասին» պայմանագրերը, 2006 թվականի հոկտեմբերի 23-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև գաղտնի տեղեկատվության փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագիրը և այլն: Նշված փաստարդերի շրջանակներում համագործակցություն է իրականացվում մասնավորապես ռազմական նշանակության արտադրանքի փոխադարձ մատակարարությունների, ռազմական համագործակցության ընթացքում փոխանակված գաղտնի տեղեկատվության պաշտպանության և մի շարք այլ ուղղություններով:

Համագործակցության տեսանկյունից հատկապես կարևոր դեր է կատարում ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 102-Ն որոշմամբ հաստատված հայ-բելառուսական ռազմատեխնիկական համագործակցության միջկառուպարական հանձնաժողովը, որի աշխատանքների կազմակերպումը մեծ մասամբ իրականացվում է կողմերի պետություններում համապատասխան ներկայացուցիչների ուժերով, ինչը և տնտեսապես շահավետ է, և աշխատանքների կազմակերպման ու համադրման տեսանկյունից՝ արդյունավետ:

Անցած ժամանակահատվածում իրականացված միջոցառումները և դրանցում քննարկված հարցերը վկայում են, որ հայ-բելառուսական ռազ-

## ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

մական համագործակցությունը զարգացման միտում ունի՝ խորացնելու համագործակցությունը ռազմական ուսուցման (հայ սպասների ուսուցում Քելառուսի ռազմական ակադեմիայում), ռազմական արդյունաբերության, ՀՕՊ, ռազմաքաղաքական համագործակցության բնագավառներում, ՀՀ ԶՈՒ-ին ռազմական նշանակության տեխնիկայի մատակարարման գործընթացում:

Հայաստանի Հանրապետությունը բացի նշված երկրներից՝ ռազմական որոշակի համագործակցություն է իրականացնում նաև Լիտվայի, Ռուսականական Հանդիպումների, Հայաստանի, Եստոնիայի, Ռուսականական Հանդիպումների և Բելգիայի հետ: Հայ-լիտվական ռազմական համագործակցությունը, որը զարգանում է պլանային հիմքի վրա, կարելի է համարել ամենաարդյունավետ զարգացող ուղղություններից մեկը, քանի որ երկկողմ ձևաչափից զատ այն ընդլայնվում է նաև բազմակողմ ձևաչափով և հատկապես ՆԱՏՕ-ի ԳՀ ծրագրի շրջանակներում: Լիտվայի հետ բանակցությունների ընթացքում քննարկվել են Հարավկովկասյան տարածաշրջանում ընթացող զարգացումների, Հարավկովկասյան և Բալթյան տարածաշրջանների փոխհամագործակցության զարգացման, Հայաստանի Հանրապետության և Լիտվայի Հանրապետության զինված ուժերի բարեփոխումների, եվրախնդեքնան հարցում, խաղաղապահ առաքելության ոլորտում փորձի փոխանակման, ռազմաւումնական ոլորտում համագործակցության շարունակական խորացման, ինչպես նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր: Հայ-լիտվական ռազմական համագործակցության ներկա զարգացումները ցույց են տալիս, որ հետագա տարիների ընթացքում այդ համագործակցությունը զարգացման և ընդլայնման լավ հնարավորություններ ունի, որոնց միտումները նկատելի են:

Հայաստանի և Ռուսականական միջև երկկողմ ռազմական համագործակցության որոշակի ակտիվացում է նկատվել: Երկու երկրների ռազմաքաղաքական դեկավարների տարբեր հանդիպումների ընթացքում քննարկվել են երկկողմ ռազմական ու ռազմատեխնիկական համագործակցության առկա խնդիրները և հետանկարները, կարծիքներ են փոխանակվել վերջին ռազմաքաղաքական զարգացումների շուրջ: Բանակցությունների ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել խաղաղապահ առաքելության, պաշտպանական բարեփոխումների, ՆԱՏՕ-ի շրջանակներում համագործակցության խնդիրներին: Կողմերն անդրադարձել են նաև հետախուզության, ավիացիայի, ՀՕՊ, ՌԷՊ և այլ բնագավառներում համագործակցության ակտիվացման հնարավորություններին:

Հայ-բուլղարական ռազմական համագործակցության շրջանակներում տեղի ունեցած հան-

դիպումների ընթացքում քննարկվել են կաղըերի պատրաստման, խաղաղապահ առաքելության, ԶՈՒ-ում քաղաքացիական տարրի ներդրման, պաշտպանական օրենսդրության արդիականացման, ռազմատեխնիկական և այլ ոլորտներում երկկողմ համագործակցության հնարավորությունները: Կարերպվել է նաև Բուլղարիայի փորձագիտական օժանդակությունը ՀՀ պաշտպանական բարեփոխումների իրականացման գործընթացում: Բուլղարիայի հետ փոխգործակցության ժամանակ կազմակերպվել են նաև աշխատանքային հանդիպումներ պաշտպանական պլանավորման քաղաքականության և ԶՈՒ կառուցվածքի վերանայման նախապատրաստման ու իրականացման հարցերի, ինչպես նաև թիկունքային համակարգի կառուցվածքի և զարգացման պլանների վերաբերյալ:

Բելգիան ՆԱՏՕ-ի ամենաակտիվ պետություններից մեկն է, ուստի նրա հետ ռազմական համագործակցության ծավալումը կարող է մեծապես նպաստել թե՛ Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունների զարգացմանը և թե՛ ՀՀ պաշտպանական բարեփոխումների իրականացմանը: 2006 թվականի հունիսի 13-ից 14-ը տեղի է ունեցել ՀՀ պաշտպանության նախարար U. Սարգսյանի պաշտոնական այցը Բելգիայի Թագավորություն: Այցի ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարը հանդիպումներ է ունեցել Բելգիայի պաշտպանության նախարարի և ԶՈՒ ԳԵ պետի հետ: Բելգիայի պաշտպանության նախարար Անդրե Ֆլահուի հետ տեղի ունեցած հանդիպման ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարը Ա. Ֆլահուին ներկայացրել է ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի զարգացումներն ու քննարկել ՀՀ և ԲԹ գինված ուժերի միջև համագործակցության հնարավորությունները:

Այսպիսով, նախորդ տարիներին երկկողմ ռազմական համագործակցության համաձայնագրեր են ստորագրվել Ֆրանսիայի, Սլովակիայի, Հունգարիայի և Չեխիայի պաշտպանության գերատեսչությունների հետ: Նշանակալի ձեռքբերումներից է նաև Գերմանիայի և Լեհաստանի հետ երկկողմ ռազմական համագործակցության շրջանակների ընդլայնումը՝ դրանց հաղորդելով առավել բազմաշերտ քննությունը: Գերմանիայի հետ համագործակցությունն ընդգրկեց խաղաղապահ առաքելությունը, ռազմական կրթությունը և ուսումը, ինչպես նաև ռազմական բժիշկների պատրաստումը, իսկ Լեհաստանի հետ՝ ռազմադիլունարերությունը, ռազմավարական պլանավորումն ու ռազմական կրթությունը: Գերմանիայում նշանակվել է ՀՀ ռազմական կատարացման կանադայում և Ֆրանսիայում ՀՀ ռազմական կցորդների, ՍՍԿ-ում՝ ՀՀ ռազմական ներկայացուցչության հավատարմագրման գործընթացը: Շարունակվում է նաև

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Մեծ Բրիտանիայի հետ ռազմական համագործակցությունը, որն անցկացվում է «Բրիտանական ռազմական խորհրդատվական և ուսումնական խմբի» կողմից ռազմական պատրաստության, ինչպես նաև անզերեն լեզվի ուսուցման շրջանակներում:

ՆԱՏՕ-ի անդամ և մյուս երկրներից կարելի է

առանձնացնել Լիտվայի, Ռումինիայի, Բուլղարիայի, ինչպես նաև Ավստրիայի և Խովհանի հետ երկկողմ ռազմաքաղաքական գործակցությունը:

<sup>1</sup> Տե՛ս Մинистры обороны Армении и Греции обсудили деятельность армянских миротворцев в Косово (<http://www.armenia-online.ru/armnews/5087.html>)

<sup>2</sup> Տե՛ս Օվսեպյան Լ., Иванов В. Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан, Грузия) и Центральной Азии: Динамика и основные тенденции развития, Еր., Институт политических исследований ГНКО, 2010, С. 96.

<sup>3</sup> Լրացուցիչ տե՛ս <http://www.arlis.am>

<sup>4</sup> Լրացուցիչ տե՛ս <http://www.president.am>

<sup>5</sup> Տե՛ս OSCE Office in Yerevan, Overview of the Office activities in 2008:

<sup>6</sup> Լրացուցիչ տե՛ս <http://www.arlis.am>

<sup>7</sup> Լրացուցիչ տե՛ս <http://www.mil.am>

**Տիգրան Կոչարյան**

Начальник отдела юридического управления МО РА,  
Советник 1-ого класса СГС,  
доктор политических наук, доцент

### РЕЗЮМЕ

#### *Военно-политическое партнерство Республики Армения с рядом зарубежных стран*

Республика Армения в своей политике международного сотрудничества выделяет осуществление военно-политического взаимодействия с некоторыми зарубежными странами. Армения заинтересована развивать многопрофильные отношения с европейскими странами, считая первоочередным укрепление и расширение двухсторонних связей в политической, включая военно-политической, сфере. За прошедшие годы было осуществлено двухстороннее военное сотрудничество с ведомствами обороны Греции, Китая, Германии, Великобритании, Франции, Словакии, Канады и Белоруссии. Значительными достижениями являются также расширение двухсторонних военно-политических взаимодействий с Литвой, Украиной, Латвией, Эстонией, Румынией, Болгарией и Бельгией, придавая этим связям более многоуровневый характер.

**Ключевые слова:** безопасность, взаимосотрудничество, оборонные реформы, политический диалог, стратегия, регион, политика, защита страны, международный мир, миротворческая миссия.

**Tigran Kocharyan**

Head of the Branch of the Law Department in MoD  
of the Republic of Armenia, 1-st Class adviser of SCS,  
Doctor in Political Sciences, Associate Professor

### SUMMARY

#### *Military-political partnership Republic of Armenia with a number of foreign countries*

The Republic of Armenia in its international cooperation policy separates also political and military cooperation with a number of foreign countries. Armenia is interested in developing relationships with European countries, primarily considering the strengthening and expansion of bilateral relations in policy, including military-political sphere. In previous years, bilateral military cooperation is carried out with defense agencies of Greece, China, Germany, Great Britain, France, Slovakia, Belarus and Canada. One of the significant achievements is the expansion of the scope of bilateral military cooperation with Lithuania, Ukraine, Latvia, Estonia, Romania, Bulgaria and Belgium, transmitting the multi-layered character to these relations.

**Keywords:** security, cooperation, defence improvements, political dialog, strategy, region, policy, country defence, international peace, peacekeeping mission.